# ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 01/22

ք.Երևան

14/11/2022թ.

ՍՈՒՅՆ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ (այսուհետ՝ սույն **Պայմանագիր**) կնքվել է հետևյալ կողմերի միջև՝ **«Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը** (այսուհետ՝ **«Կապալառու»**), ի դեմս լիազորված անձ՝ կորպորատիվ վաճառքների վարչության ղեկավար Կարեն Ասատուրյանի, ով գործում է N00229/20 լիազորագրի հիման վրա տրված 08.08.2022թ.-ին, մի կողմից, և **«Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն»** ՓԲԸ-ն (այսուհետ՝ **«Պատվիրատու»),** ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա ( Պատվիրատուն և Կապալառուն միասին այսուհետ՝ «Կողմեր», իսկ յուրաքանչյուրը առանձին՝ «Կողմ»):

## 1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

**Աշխատանք՝** Կապալառուի կողմից սույն Պայմանագրի համաձայն Տարածքում ցանցի կառուցման և Սարքավորումների տեղադրման նպատակով աշխատանքներ,

**Նյութեր՝** Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ նյութեր

Սարքավորումներ՝ Կապալառուի կողմից Աշխատանքի կատարման համար օգտագործվող և Պատվիրատուին որպես ի պահ փոխանցվող ապրանքներ, որոնց ցանկը ներկայացված է Հավելված 1-ում,

Տարածք՝ ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1

**Աշխատանքի Հանձնման-Ընդունման Ակտ՝** ինչպես սահմանված է սույն Պայմանագրի 11.3 կետում,

**Չբացահայտված Տեղեկատվություն (առևտրային գաղտնիք)՝** անկախ ձևից Պատվիրատուին և նրա գործունեությանը վերաբերող ցանկացած տեխնիկական, ֆինանսական, կազմակերպչական, առեւտրային և Պատվիրատուին և նրա գործունեությանը վերաբերող այլ տեղեկատվություն, որը անհայտ է երրորդ անձանց և երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առեւտրային արժեք, չկա օրինական հիմքերով դա ազատորեն ստանալու հնարավորություն եւ Պատվիրատուն միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար: Չբացահայտված տեղեկատվությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալ տեղեկատվությամբ՝ Պատվիրատուի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող անձանց վերաբերյալ տեղեկատվություն, պայմանագրային պայմաններ, հաշվետվություններ, նկարներ, տեխնիկական նախագծեր, ֆորմուլաներ, ալգորիթմներ, մեթոդներ, սարքավորումներ, մոդելներ/նմուշներ, գործընթացներ (տեխնոլոգիական պրոցեսներ), հավաքված տվյալներ, հաճախորդներին վերաբերող տվյալներ, ֆայլեր, ծրագրային ապահովումներ, համակարգչային ծրագրեր, բիզնես տեխնոլոգիաներ, արտադրության գաղտնիքներ (նոու-հաու), հաճախորդների անուններ, ներկա, պլանավորված կամ առաջարկվող ապրանքներ, մարկետինգի եւ բիզնես պլաններ, բիզնես և մարկետինգ մեթոդներ, կանխատեսումներ, նախագծեր եւ վերլուծություններ, ֆինանսական տեղեկատվություն ու գներ, ընթացակարգեր, ապրանքներ, ծառայություններ, հայտնագործություններ, գյուտեր, արդյունաբերական նմուշ, օգտակար մոդել, հեղինակային իրավունքի օբյեկտներ, գներ, որով Կողմերը ծառայություններ են մատուցում կամ գնում և/կամ ապրանք են վաճառում կամ գնում և այլ տեղեկատվություն, գրավոր կամ այլ կերպ, որը վերաբերում է Պատվիրատուի բիզնեսին (գործունեությանը), դրանց գործունեության կարգին, պլաններին, գործընթացներին, ապրանքներին, աշխատողներին, ինչպես նաև տեղեկատվություն, որն ունի կոնֆիդենցիալ (գաղտնի) բնույթ և հնարավորություն ունի ազդելու Պատվիրատուի զարգացման և արդյունավետ գործունեության վրա և որը հնարավորություն է տալիս Պատվիրատուին արդյունավետորեն մրցակցել իր բիզնեսում (գործունեության ոլորտում):

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Կապալառուն պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով

Պատվիրատուի առաջադրանքով կատարել Աշխատանք, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքի արդյունքը և վճարել սույն Պայմանագրով սահմանված գինը՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով:

## 3. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1.** Կապալառուն երաշխավորում է, որ սույն Պայմանագրի կատարման ընթացքում օգտագործվող Կապալառուի Նյութերի որակը համապատասխանում է նման նյութերին ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով ամրագրված ստանդարտներին:

**3.2.** Կապալառուն երաշխավորում է, որ ունի սույն Պայմանագրով սահմանված Աշխատանքը իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունները և լիցենզիաները, որոնք պահանջվում են ՀՀ օրենսդրությամբ:

**3.3.** Կապալառուն երաշխավորում և պարտավորվում է Աշխատանքը կատարել ժամանակին, պատշաճ ձևով և բարձր որակով՝ համաձայն սույն Պայմանագրի, ՀՀ օրենսդրության, Պատվիրատուի ցուցումների, պահանջների և արժեքների:

**3.4.** Կապալառուն հայտարարում և երաշխավորում է, որ ունի անհրաժեշտ հմտություններով և ունակություններով օժտված անձնակազմ և բավարար նյութական և տեխնիկական հնարավորություններ սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը պատշաճ ապահովելու համար:

## 4. ՆՊԱՏԱԿԸ

**4.1.** Սույն Պայմանագիրը կնքվում է Պատվիրատուի նշած Տարածքում ցանցի կառուցման և Սարքավորումների տեղադրման նպատակով: Կողմերն արձանագրում են, որ Պայմանագրի ժամկետի ավարտից հետո տեղադրված սարքավորումների և այլ միջոցների ապամոնտաժումն իրականացվում է Կապալառուի կողմից, առանց հավելյալ վճարի, ծառայությունների մատուցման ավարտից հետո մինչև 2022 թվականի դեկտեմբերի 14-ը ներառյալ:

## 5. ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

**5.1.** Կապալառուն Աշխատանքը իրականացնում է իր ուժերով, նյութերով, միջոցներով, գործիքներով և Սարքավորումներով և պատասխանատվություն է կրում դրանց որակի, ինչպես նաև տեսակի ճիշտ ընտրության համար:

**5.2.** Կապալառուի կողմից տրամադրվող բոլոր Սարքավորումները պետք է նոր լինեն, իսկ օգտագործված, ինքնաշեն նյութերի և վերամշակված պարագաների օգտագործումն արգելված է:

## 6. ՌԻՍԿԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**6.1.** Աշխատանքի արդյունքի նկատմամբ սեփականության իրավունքը, ինչպես նաև վերջինիս պատահական կորստի կամ պատահական վնասվածի ռիսկը Պատվիրատուին է փոխանցվում Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին սույն Պայմանագրի համաձայն հանձնելու պահից: Աշխատանքը համարվում է Պատվիրատուին հանձնված և Պատվիրատուի կողմից ընդունված Աշխատանքի Հանձնման-Ընդունման Ակտը երկկողմանի ստորագրելու պահից:

## 7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՎԻՐՈՒՄ

**7.1.** Կապալառուն Աշխատանքը կատարում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ի համաձայն: Կապալառուն ձեռնամուխ է լինում Աշխատանքի կատարմանը սույն Պայմանագրի կնքումից հետո: Պատվիրվող Աշխատանքի նկարագրությունը, Աշխատանքի գինը և Աշխատանքին և դրա կատարմանը վերաբերող այլ տեղեկությունները սահմանվում են սույն Պայմանագրով:

## 8. ԺԱՄԿԵՏ

**8.1.** Կապալառուն Աշխատանքը կատարում է սույն Պայմանագրի կնքումից հետո մինչև 2022 թվականի դեկտեմբերի 12-ը ներառյալ: Կապալառուն իրավասու է միացման, համակցման և սարքերի

տեղադրման աշխատանքը կատարել սույն կետում սահմանված ժամկետից ավելի շուտ:

## 9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՈՒՄ

**9.1.** Կապալառուն պարտավոր է Աշխատանքը կատարել սույն Պայմանագրի Հավելված 1-ի և սովորաբար և անվերապահորեն նման Աշխատանքի կատարմանը ներկայացվող նորմերի ու կանոնների համաձայն:

**9.2.** Պատվիրատուն պարտավոր է Կապալառուի համար ապահովել պատշաճ աշխատանքային պայմաններ, որոնք նախապես համաձայնեցվել են Պատվիրատուի հետ, և չխոչընդոտել Աշխատանքի կատարմանը:

**9.3.** Կապալառուն պարտավոր է Աշխատանքը կատարել անձամբ: Կապալառուն Աշխատանքի կատարումը կարող է հանձնարարել ենթակապալառուին միայն Պատվիրատուի նախնական համաձայնությամբ:

**9.4.** Կողմերը պարտավորվում են փոխադարձ խորհրդատվություն և օգնություն տրամադրել պայմանագրային դրույթների պատշաճ իրականացման համար:

Կապալառուն պարտավոր է ապահովել աշխատանքների կատարման ընթացքում անվտանգության տեխնիկայի նորմերի և կանոնների պահանջների պահպանումը, ինչպես նաև Պայմանագրում նշվածտարածքում աշխատանքներ կատարելիս գործել այնպես, որ խոչընդոտներ չառաջանան Պատվիրատուի բնականոն գործունեության իրականացման համար, ինչպես նաև չհակասեն Պատվիրատուի կողմից լրացուցիչ սահմանված և տվյալ տարածքում գործող ներքին աշխատանքային կանոնակարգերի պահանջներին, ինչպես նաև Եվրպական հեռարձակողների միության կողմից «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի անցկացման վերաբերյալ սահմանված անվտանգության կանոններին

## 10. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՍՏՈՒԳՈՒՄ

**10.1.** Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կատարած Աշխատանքի ընթացքը և որակը, դրա կատարման ժամկետների պահպանումը, Կապալառուի Նյութերի որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը: Այդպիսի հսկողության իրականացման արդյունքում թերություններ հայտնաբերելիս Պատվիրատուն պարտավոր է անհապաղ տեղեկացնել Կապալառուին:

## 11. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄ

**11.1.** Աշխատանքը ավարտելուց հետո Կապալառուն այդ մասին անմիջապես տեղեկացնում է Պատվիրատուին կատարված Աշխատանքի ստուգում իրականացնելու և ընդունելու համար:

**11.2.** Կատարված Աշխատանքի ստուգումը իրականացվում է Կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ, որի ընթացքում ստուգվում է կատարված Աշխատանքի համապատասխանությունը սույն Պայմանագրին, ՀՀ օրենսդրությանը և ներկայացվող այլ պահանջներին:

**11.3.** Կատարված Աշխատանքի վերաբերյալ Կողմերը կնքում են Աշխատանքի Ընդունման-հանձնման ակտ: Աշխատանքի ընդունման-հանձնման ակտում նշվում է Աշխատանքը ընդունված է ամբողջությամբ, եթե Աշխատանքը կատարվել է պատշաճ և ամբողջությամբ, սույն Պայմանագրի համաձայն, ներառյալ՝ վերացվել են հայտնաբերված բոլոր թերությունները:

**11.4.** Աշխատանքի արդյունքի ստուգման արդյունքում սույն Պայմանագրով սահմանված կարգով Պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքում Կապալառուի հետ կազմվում է Աշխատանքի Ընդունման-հանձնման ակտ, որտեղ նշվում է, որ Աշխատանքը ընդունված է վերապահումով: Այդպիսի ընդունման-հանձնման ակտը համարվում է թերությունների ակտ, որտեղ սահմանվում են Աշխատանքի արդյունքում հայտնաբերված թերությունները և դրանց վերացման ժամկետները (եթե Պատվիրատուն պահանջում է թերությունների վերացում սույն Պայմանագրով սահմանված կարգով): Այդպիսի ընդունման-հանձնման ակտի ստորագրումը չի կարող դիտվել որպես Աշխատանքի ընդունում, քանի որ Աշխատանքը ենթակա չէ մասնակի ընդունման:

**11.5.** Պատվիրատուն պարտավոր է Կապալառուի կողմից Աշխատանքի ավարտի վերաբերյալ տեղեկացվելուց հետո ոչ ուշ, քան 10 (տասը) օրվա ընթացքում իրականացնել կատարված Աշխատանքի ստուգումը սույն Պայմանագրով սահմանված կարգով: Պատվիրատուի կողմից սույն կետով սահմանված ժամկետում նման պարտականության չկատարման և Աշխատանքի հանձնման-ընդունման ակտի չստորագրման դեպքում Աշխատանքը համարվում է Պատվիրատուի կողմից պատշաճ և ամբողջական ընդունված:

## 12. ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄԸ

**12.1.** Պատվիրատուն կարող է Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել՝ պայմանով, եթե դրանք հայտնաբերված լինեն Աշխատանքի Հանձնման-ընդունման ակտը երկկողմանի ստորագրման օրվանից հետո՝ 10-օրյա ժամկետում:

**12.2.** Պայմանագրի 12.1 կետով սահմանված ժամկետի ընթացքում Աշխատանքի կատարման կամ Աշխատանքի թերություններով կատարման, որոնք դարձրել են Աշխատանքի արդյունքը օգտագործման համար ոչ պիտանի կամ Աշխատանքի ոչ ամբողջական կամ թերի կամ թերությամբ կատարման դեպքում Կապալառուն պարտավոր է Կողմերի միջև համաձայնեցված ժամկետի ընթացքում անվճար նորից կատարել Աշխատանքը կամ վերացնել կատարված Աշխատանքի թերությունները:

**12.3.** Թերությունները վերացնելուց հետո Աշխատանքի ընդունումը կատարվում է նույն կարգով, ինչ սկզբնական Աշխատանքի ընդունումը:

**12.4.** Տարընթերցումներից խուսափելու համար, սույն Պայմանագրի 12-րդ կետով ներկայացված թերությունների վերացման համար նախատեսված ժամկետը չի դիտվում որպես երաշխիքային ժամկետ: Աշխատանքի արդյունքի անպատշաճ որակի կապակցությամբ պահանջ ներկայացնելու ժամկետը (երաշխիքային ժամկետը) սահմանվում է 1 տարի:

**12.5.** Պատվիրատուն իրավունք ունի Կապալառուին ներկայացնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 721-րդ հոդվածով սահմանված պահանջներից որևէ մեկը, եթե Կապալառուն աշխատանքը կատարել է սույն պայմանագրի խախտմամբ, որը վատթարացրել է դրա արդյունքը, կամ այլ թերություններով, որոնք այն դարձրել են պայմանագրով նախատեսված օգտագործման համար ոչ պիտանի:

## 13. ԳԻՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ

**13.1.** Կապալառուի կողմից կատարվող Աշխատանքի Գինը կազմում է **8 400 000** (ութ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ (ԱԱՀ ներառյալ):

**13.2.** Պայմանագրի 13.1 կետում նշված գումարը ենթակա է վճարման Կապալառուին՝ Աշխատանքի հանձնման-Ընդունման երկկողմանի ստարագրված ակտի և Պատվիրատուին ներկայացված հարկային հաշվի հիման վրա՝ հարկային հաշվի ներկայացումից հետո 15 (տասհինգ) օրվա ընթացքում: Պատվիրատուն Պայմանագրի 13.1 կետում նշած Աշխատանքի Գինը վճարում է Կապալառուին բանկային փոխանցմամբ և համարվում է վճարման պարտավորությունը կատարած գումարը Կապալառուի հաշվեհամարին մուտք լինելու պահից:

## 14. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

**14.1.** Կապալառուն Պատվիրատուի առջև պատասխանատվություն է կրում սույն Պայմանագրով, Կողմերի համար Աշխատանքի կատարման համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր շինարարական նորմերով, կանոններով և ստանդարտներով նախատեսված պահանջներից շեղումներ թույլ տալու կամ դրանք չպահպանելու համար:

**14.2.** Կապալառուն պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով սահմանված երաշխավորությունների խախտման համար: Կապալառուն պարտավոր է Պատվիրատուին հատուցել երաշխավորությունների խախտման արդյունքում պատճառված վնասը ամբողջությամբ:

**14.3.** Սույն Պայմանագրով սահմանված 8.1 կետում սահմանված Աշխատանքի կատարման ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կապալառուից պահանջել վճարելու տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար Աշխատանքի համար վճարման ենթակա սահմանված գումարի 0.01 (զրո ամբողջ մեկ հարյուրերորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան Աշխատանքի

Գնի 3 (երեք) տոկոսը:

**14.4.** Սույն Պայմանագրով սահմանված Աշխատանքի համար վճարման ժամկետները խախտելու համար Կապալառուն գրավոր պահանջի առկայության դեպքում իրավունք ունի Պատվիրատուից պահանջել վճարելու տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար, Աշխատանքի համար վճարման ենթակա գումարի 0.01 (զրո ամբողջ մեկ հարյուրերորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան Աշխատանքի Գնի 3 (երեք) տոկոսը:

## 15. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄ

**15.1.** Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանի հրաժարվել սույն Պայմանագրից՝ Կապալառուին վճարելով մինչև սույն Պայմանագրի կատարումից հրաժարվելու վերաբերյալ ծանուցում ստանալու պահը կատարած Աշխատանքին համարժեք գին: Սույն կետում սահմանված դեպքում Պայմանագրի լուծման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը:

**15.2.** Կապալառուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին առնվազն մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելով Պատվիրատուին:

**15.3.** Ցանկացած Կողմի կողմից սույն Պայմանագրի որևէ դրույթ խախտելու դեպքում, մյուս Կողմը կարող է միակողմանի հրաժարվել սույն Պայմանագրից՝ այդ մասին գրավոր ծանուցելով խախտում թույլ տված Կողմին և նրան տրամադրելով 15 (տասնհինգ) աշխատանքային օր ժամանակ թերությունները վերացնելու համար: Եթե խախտում թույլ տված Կողմը չի վերացնում խախտումը սահմանված ժամկետում, ապա Պայմանագիրը համարվում է լուծված թերությունները վերացնելու ժամկետը լրանալու պահից, առանց որևէ այլ իրավական ձևակերպումներ կատարելու կամ դատարանի կամ արբիտրաժի անհրաժեշտության:

***15.4.** Պայմանագրի լուծում՝ կապված Ֆորս մաժորի հետ*

**15.4.1.** Կողմն ազատվում է Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելու պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ իր կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարումը ֆորս մաժորի ազդեցության հետևանք է:

**15.4.2.** Այս դեպքում Կողմերից յուրաքանչյուրն իրավասու է լուծել Պայմանագիրը՝ Պայմանագրի 17.5 կետին համապատասխան:

## 16. ՉԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

**16.1.** Սույն Պայմանագրի շրջանակներում և դրա նպատակների իրականացման նպատակով Պատվիրատուն Կապալառուին տրամադրում է Չբացահայտված Տեղեկատվություն, իսկ Կապալառուն պարտավորվում է սույն Պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում և դրա դադարումից հետո 5 (հինգ) տարվա ընթացքում երրորդ անձանց համար չբացահայտել կամ նրանց այլ կերպ չտրամադրել Չբացահայտված Տեղեկատվությունը:

**16.2.** Սույն Պայմանագրով Պատվիրատուի կողմից բացահայտված Չբացահայտված Տեղեկատվությունը հանդիսանում է Պատվիրատուի սեփականությունը և սույն Պայմանագրով այդ տեղեկատվության նկատմամբ որևիցե իրավունք և/կամ լիցենզիա ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի փոխանցվում Կապալառուին, նրա աշխատողներին, տնօրեններին, Կապալառուներին, մասնաճյուղերին, կախյալ կամ դուստր ընկերություններին:

**16.3.** Կապալառուն պարտավորվում է չընդօրինակել եւ (կամ) չպատճենահանել եւ (կամ) չօգտագործել իրեն տրամադրված Չբացահայտված Տեղեկատվությունը, բացառությամբ սույն Պայմանագրով նախատեսված նպատակների համար:

**16.4.** Կապալառուն պարտավորվում է գաղտնի պահել տրամադրված Չբացահայտված Տեղեկատվությունը եւ ձեռնարկել անհրաժեշտ բոլոր ողջամիտ քայլերը պահպանելու համար այն, այդ թվում՝ բոլոր այն քայլերը, որոնք նա ձեռնարկում է պահպանելու համար սեփական նմանատիպ Չբացահայտված Տեղեկատվությունը:

**16.5.** Կապալառուն պարտավորվում է առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության երրորդ անձանց համար չբացահայտել կամ նրանց այլ կերպ չտրամադրել Չբացահայտված Տեղեկատվությունը, բացառությամբ՝

**16.5.1.** իր աշխատողներին եւ տնօրեններին, իր մասնաճյուղերին, կախյալ կամ դուստր ընկերություններին, իր պրոֆեսիոնալ խորհրդատուներին, գործակալներին, որոնք սույն Պայմանագրով նախատեսված նպատակների իրականացման համար անհրաժեշտ է, որ տիրապետեն տվյալ տեղեկությանը եւ որոնք ստորագրել են փաստաթուղթ իրենց տրամադրված տեղեկատվության պահպանման համար՝ սույն Պայմանագրով սահմանված պայմաններով,

**16.5.2.** պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, դատարաններին օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում;

**16.6.** Եթե Կապալառուն պարտավոր է պետական մարմիններին, դատական մարմիններին կամ իր կանոնադրությամբ սահմանված մարմիններին նրանց պահանջով տրամադրել Չբացահայտված Տեղեկատվությունը, ապա նա պարտավոր է մինչ նման տեղեկությունների տրամադրումը այդ մասին տեղյակ պահել Պատվիրատուին եւ վերջինիս պահանջով ու հաշվին ողջամիտ ջանքեր գործադրել սահմանափակելու համար Չբացահայտված Տեղեկատվության տրամադրումը:

**16.7.** Սույն պայմանագրի ժամկետի ավարտից հետո կամ Պատվիրատուի պահանջով, Կապալառուն պարտավոր է նյութական կրիչի վրա Պատվիրատուին վերադարձնել իր տիրապետության տակ գտնվող ամբողջ Չբացահայտված Տեղեկատվությունը եւ դրանց պատճենները եւ (կամ) Պատվիրատուի պահանջով ջնջել նշված Չբացահայտված Տեղեկատվությունը բոլոր համակարգչային ֆայլերից եւ ինֆորմացիոն կրիչ սարքերից:

## 17. ՖՈՐՍ ՄԱԺՈՐ (Անհաղթահարելի ուժի ազդեցություն)

**17.1.** Կողմերն ազատվում են իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարելու պատասխանատվությունից, եթե դա հետևանք է իրենց ողջամիտ վերահսկողությունից դուրս գտնվող ցանկացած իրավիճակի, որը Կողմերը ողջամտորեն կերպով չէին կարող կանխատեսել Պայմանագիրը ստորագրելիս և, որն անհնարին է դարձնում սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը, այնպես որ տվյալ իրավիճակում այդպիսի կատարումը ողջամտորեն կարող է համարվել անհնար:

**17.2.** Սույն Պայմանագրի իմաստով Կողմերը ֆորս մաժոր են համարում այնպիսի տարերային աղետները, ինչպիսիք են՝ հրդեհը, ջրից առաջացած վնասը, բնական աղետները, փոթորիկները, ջրհեղեղը, երկրաշարժը, ինչպես նաև հարձակումները, պատերազմը կամ զինված բախումները, ռազմական գործողությունները, քաղաքացիական պատերազմը, ապստամբությունները կամ քաղաքացիական անկարգությունները, ահաբեկչական գործողությունները, պայթյունները, աշխատանքի բնականոն ընթացքը խոչընդոտող ընդհանուր հանգամանքները, ինչպիսիք են՝ գործադուլները, աշխատանքի ներկայանալուն արգելելը (լոկաուտ), փոխադրամիջոցների կամ հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի արգելափակումը, ցանկացած իրավական կամ կարգավորիչ սահմանափակման կիրառումը կամ պետական մարմինների որոշումները, որոնք չեն վերագրվում Կողմերին (օրինակ՝ էմբարգո):

**17.3.** Կողմը, որը տուժել է Ֆորս մաժորի ազդեցությունից, պարտավոր է այդ մասին հնարավորինս շուտ տեղյակ պահել մյուս Կողմին:

**17.4.** Ֆորս մաժորի ի հայտ գալու դեպքում կասեցվում է տուժած Կողմի կողմից իր պարտավորությունների կատարումը՝ ֆորս մաժորի ազդեցության ամբողջ տևողության ժամկետով: Բայցևայնպես, Կողմերը պարտավոր են ձեռնարկել բոլոր ողջամիտ միջոցառումները ֆորս մաժորի հետևանքները նվազագույնի հասցնելու համար:

**17.5.** Եթե ֆորս մաժորի ազդեցության հետևանքով 30 (երեսուն) օր շարունակ Կողմերից մեկը չի կարողանում կատարել իր պայմանագրային պարտավորությունները, մյուս Կողմն իրավասու է լուծել Պայմանագիրը՝ այդ մասին պատվիրված նամակ ուղարկելով մյուս Կողմին (ստացման ծանուցագրով)՝ առանց մյուս Կողմին որևէ փոխհատուցում վճարելու պարտավորության:

## 18. ՕՐԵՆՔ ԵՎ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**18.1.** Սույն Պայմանագիրը ղեկավարվում և մեկնաբանվում է ՀՀ օրենսդրությամբ:

**18.2.** Կողմերը պարտավորվում են սույն Պայմանագրից ծագող և/կամ դրա հետ կապված ցանկացած տարաձայնություն լուծել բանակցությունների միջոցով: Սույնով Կողմերից յուրաքանչյուրը

պարտավորվում է դրական դիտարկել մյուս Կողմի ցանկացած առաջարկ: Եթե Կողմերը չեն կարողանում համաձայնության գալ տարաձայնությունների վերաբերյալ բնակացություններըը սկսելուց տասնհինգ օր հետո, ապա տարաձայնությունը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Սույն Պայմանագրի կապակցությամբ իրավասու են ճանաչվում ՀՀ դատարանները:

## 19. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

**19.1.** Սույն Պայմանագրով բոլոր ծանուցումները պետք է ուղարկվեն էլեկտրոնային նամակով, հեռապատճենով կամ գրավոր նամակով՝ սույն Պայմանագրում նշված հասցեներով, եթե սույն Պայմանագրի որևէ այլ կետով այլ բան սահմանված չէ:

## 20. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**20.1.** Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, որի գործողությունը տարածվում է մինչ պայմանագրի ստորագրումը Կողմերի միջևփաստացի ծագած հարաբերությունների վրաև գործում է մինչև Կողմերի կողմից սույն Պայմանագրով ստանձնած իրենց պարտականությունների ամբողջական կատարումը: Սույն Պայմանագրի լուծման պահից Կողմերի բոլոր հետագա իրավունքներն ու պարտավորությունները դադարում են, բացառությամբ Կապալառուի 1) սույն Պայմանագրի լուծման օրվա դրությամբ կամ դրանից հետո վճարման ենթակա բոլոր պարտքերի, 2) սույն Պայմանագրով սահմանված որևէ այլ պարտավորության, որը ուժի մեջ է մտնում լուծման ամսաթվից հետո կամ որը պետք է կատարվի Պայմանագրի լուծման հետ կապված կամ դրա հետևանքով կամ որի գործողությունը շարունակվում է Պայմանագրի լուծումից հետո (օր.՝ երաշխիքի և երաշխիքային սպասարկման հետ կապված պարտավորություններ և այլն):

**20.2.** Սույն Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն երկու Կողմերի կողմից քննարկված և ստորագրված առանձին համաձայնությամբ: Փոփոխությունները կհամարվեն օրինական, եթե Կողմերը դրանք իրականացրել են սույն Պայմանագրի ձևով՝ ստորագրելով մեկ ընդհանուր փաստաթուղթ:

**20.3.** Կողմերը պարտավորվում են իրենց հասցեների, բանկային վավերապայմանների, ինչպես նաև վերակազմակերպման դեպքում միմյանց տեղյակ պահել երկու շաբաթվա ընթացքում:

**20.4.** Սույն Պայմանագրի Հավելված(ներ)ը վերջինիս անբաժանելի մասն է(են) կազմում:

**20.5.** Սույն Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասար իրավաբանական ուժ: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է սույն Պայմանագրի մեկ օրինակ:

## 21. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պատվիրատու | Կատարող |
| --- | --- |
| **«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ** | **«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ** |
| Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Ազատության պող. 24/1 | Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, 0011, Գ.Հովսեփյան 26 |
| ՀՎՀՀ՝ 02500052 | ՀՎՀՀ՝ 01540062 |
| «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ՝ 163004038879 | Հ/Հ՝ 2050022082671001 |
| **Կ. Ասատուրյան** | **Հ. Մովսիսյան** |
| *Կորպորատիվ վաճառքների վարչության ղեկավար* | *Գործադիր տնօրեն* |

Հավելված 1
«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ և «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ
միջև 14/11/22թ.-ին կնքված Կապալի N 01/22 Պայմանագրի

| № | Սարքավորման տեսակ, նյութ, տրանսպորտային ծախսեր, աշխատանք | Չափման միավոր | Քանակ |
|---|---|---|---|
| 1 | UniFi AC MESH PRO | հատ | 18 |
| 2 | UniFi PRO 6 | հատ | 26 |
| 3 | UniFi LR 6 | հատ | 14 |
| 4 | FO 8 core | մետր | 2000 |
| 5 | UTP CAT 5E | մետր | 4000 |
| 6 | Մալուխատար | մետր | 600 |
| 7 | Մալուխատար հատակի | մետր | 1400 |
| Կապալառուն Պայմանագրի արժեքի շրջանակներում նաև ապահովում է. սարքավորումների պատշաճ աշխատանքը, ինչպես նաև Կապալառու ընկերության համապատասխան մասնագետների սպասարկումը (առնվազն __3__ անձ)<br>Կապալառու ընկերության թվով երեք աշխատակցի (որոնցից մեկը՝ ցանցի սպասարկման մասով պատասխանատու, մեկը՝ ինտերնետի, մեկը՝ տեխնիկական մասով պատասխանատու) հերթապահությունը հետևյալ օրերին՝ 06.12.2022թ., 09.12.2022թ., 10.12.2022թ., 11.12.2022թ.: | | |
| DDOS ֆիլտրացում | | |
| Ինտերնետ 2200 Mb/s | | |
| WiFi controller access | | |
| Ընդհանուր ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ /* | | 8 400 000 ՀՀ դրամ |

**Սարքավորումները տրամադրվում են ի պահ, պայմանագրի կնքման օրվանից մինչև 12 դեկտեմբերի, 2022 թվական: Տրամադրման պահից Նշված սարքավորումների կորստի, վնասվածքի և/կամ սահմանված ժամկետում սարքին վիճակում հետ չվերադարձնելու արդյունքում առաջացած ռիսկերը կրում է Պատվիրատուն, եթե հաստատվի այն փաստը, որ Պատվիրատուն չի իրականացրել կամ պատշաճ չի իրականացրել Տարածքի անվտանգությունը, ինչպես նաև եթե հաստատվի, որ սարքավորումների կորուստը և/կամ վնասվածքը եղել է Պատվիրատուի կանխամտածված գործողությունների արդյունքում:**

**Ծառայությունների մատուցման ավարտից հետո հետո մինչև 14.12.2022 թվականը ներառյալ սարքավորումները չապամոնտաժելու դեպքում Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում դրանց կորստի, վնասվածքի և/կամ անսարքինության համար:**

**Պատվիրատու**
**«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ**

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Ազատություն պող. 24/1
ՀՎՀՀ՝ 02500052
«ՀայԷկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 163004038879

**Կ. Ասատուրյան**
*Կորպորատիվ վաճառքների վարչության ղեկավար*

**Կատարող**
**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ**

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, 0011, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001

**Հ. Մովսիսյան**
*Գործադիր տնօրեն*